իսկ գլխաւոր բանը մոռացուած է. ո՞վ է իրագործում միութեան նպատակները. այսինքն ո՞վ է հրատարակում օրինակ մանկավարժական թերթը, հիմնում թանգարան, գրադարան, սանատորիա, հիւանդանոց և այլն-խորհուրդը թէ համագումարը, վարչութիւնները թէ ընդհանուր ժողովները. ոչ մի խօսք չէ ասուած. միայն մի կէտ է յիշուած «համագումարի» գրաղմունքների շարքում, «որոշել դասագնի կամ ռոճիկի մինիմումը»— ուրիշ ոչինչ։

Ընդհանուր ուսուցչական ժողովի քննադատութեան բովից անցնելով այս կանոնադրութիւնը իրագործելի կարելի է համարել. մեր ջերմ ցանկութիւնն է, օր առաջ իրագործուած տեսնել «Ուսուցչական միութիւնը»։

ԲՐԻԶ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Վիճակացոյց թաղային վարժարանաց Կ. Պոլսոյ, պատրաստեալ յուսումնական խորհրդոյ, հրամանաւ տ. տ. Մաղաքիա ս. Պատրիարք հօր. Վիճակ 1906. յունուար 1. Կ. Պոլիս։

Ատրպետ. Խիլիֆաթ. պատմ. հետազօտութիւն. երրորդ տպ. Ալէքսանդրոպոլ 1906. գ. 50 կ.

Մարգար. Հոգեվարքի ծիծաղը. պատմուածք Բագուայ սարսափներից. Բագու, գ. 10 կ.

Զէցդէլ. Նօրմալ բանուորական օր. ռուս. թրգմ. Մ Եսայեան. գրադարան կեանքի № 4. Թիֆլիս. 1906. գ. 5 կ.

Կաուցկի. Աւստրիայի ճգնաժամը. լեզու և ազգ. ռուս. թրգմ, Ա. Ս. գրադ. կեանքի № 3. Թիֆլիս 1906. գ. 7 կ.

Տ. Ս. Լեւոնեան. Աստղիկ. տաղեր քնարերգական. Բոստոն Ատլանտեան տպարան 1904. գ. 1 ֆր.

Կանոնագիր Հայկական բարեգործական ընդհանուր միութեան. Գահիրէ։ Աղէքսանդրիա. 1906.

Արշակ Սպարապետեանց. (փոխ.) Թուաբանական խնդիրներ և օրինակներ. Մոսկ. քաղ. դպր. ուսուցիչների. պրակ բ. 30 կ. և պրակ գ. 30 կ. Թիֆլիս 1906

Ատրպետ. Հողատիրութիւնը Կովկասում. հետազօտութիւն. Ալէքսանդրոպոլ 1906 գ. 10 կ.